ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ МЕЦАМОР

Արմավիրի մարզ, գ. Մեծամոր

Армавирский марз, с.Мецамор

«29» 10 2012թ.

N__65__

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի 2012 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 7 նիստի որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Միրզոյան

9653-12
31 10 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆԻ

22 հոկտեմբերի 2012թ.վական ՈՐՈՇՈՒՄ 1 թիվ 7 նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1. Հաստատել ավագանու 2012 թվի հոկտեմբերի 22-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

## ԱՎԱԳՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1.Միրզոյան Վարդուհի | | | |
| 2.Մարտիրոսյան Հովհաննես | | | |
| 3.Մխիթարյան Հովհաննես | | | |
| 4.Մկրտչյան Գրիգոր | | | |
| 5.Մարտիրոսյան Վարդան | | | |

Համայնքի ղեկավար Է.Միրզոյան

2012թվական[illegible] հոկտեմբերի [illegible] գ.Մեծամոր

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ 1

ՈՐՈՇՄԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագրերը հաստատելու մասին

3. Դրամական օգնություն հատկացնելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2012 թվական — թիվ 2-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի Մեծամորի գյուղական համայնքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Մկրտչյան Գրիգոր | | | |
| 2. Միրզոյան Վարդուհի | | | |
| 3. Մարտիրոսյան Հովհաննես | | | |
| 4. Մխիթարյան Հովհաննես | | | |
| 5. Մարտիրոսյան Վարդան | | | |

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

2012 թվականի հոկտեմբերի 22 գ. Մեծամոր

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքն (այսուհետ՝ համայնք) ունի 1450 ազգաբնակչություն, որից կին՝ 732, տղամարդ՝ 618, ընտրողներ՝ 911:

2. Համայնքի վարչական տարածքը կազմում է 376,3 հեկտար:

3. Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 33 կիլոմետր:

4. Համայնքում գործում են՝

1) գյուղապետարան

2) Մեծամորի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն

3) Մեծամորի բուժ մանկաբարձական կետ

4) Մեծամորի կուլտուրայի տուն

## II. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԵՐԸ

5. Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) իր մեջ ներառում է 2013թվականից մինչև 2016թվականը:

## III. 2013ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

6. 2013 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքները

- Համայնքի ճանապարհների խճապատում և հարթեցում
- Կուլտուրայի տանը տանիքի մասնակի վերանորոգում
- Մանկապարտեզի տանիքի վերանորոգում

Նախատեսված աշխատանքները իրականացնել համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

## IV. 2014ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

7. Համայնքում 2014 թվականի ընթացքում նախատեսված են իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Փողոցների խճապատում և հարթեցում
- Կուլտուրայի տան՝ դահլիճի մասնակի վերանորոգում
- Մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգում

Նախատեսված աշխատանքները իրականացնել համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

## V. 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

8. Համայնքում 2015թվականի ընթացքում նախատեսված են իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Մանկապարտեզի վերանորոգում
- Համայնքի ճանապարհների խճապատում և հարթեցում

Նախատեսված աշխատանքները իրականացնել համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

## VI. 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

9. Համայնքում 2016թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքներ՝

- Մանկապարտեզի գույքի ձեռքբերում
- Համայնքի ճանապարհների խճապատում և հարթեցում
- Համայնքի գազաֆիկացման համար մասնակի ներդրում

Նախատեսված աշխատանքները իրականացնել համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

22 նոյեմբերի 2012 թվական ՈՐՈՇՈՒՄ 3 թիվ 7 նիստ

# ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մեծամորի գյուղական համայնքի թվով 6 /վեց / ընտանիքների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1.Միրզոյան Վարդուհի | | | |
| 2. Մարտիրոսյան Հովհաննես | | | |
| 3.Մխիթարյան Հովհաննես | | | |
| 4..Մկրտչյան Գրիգոր | | | |
| 5.Մարտիրոսյան Վարդան | | | |

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

2012թ. նոյեմբերի 22 գ. Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի
N –3 ՈՐՈՇՄԱՆ

# Ց ՈՒ Ց Ա Կ

Հայրապետյան Մհեր 100000 / մեկ հարյուր հազար / դրամ

Մաքևոսյան Գագիկ 100000 / մեկ հարյուր հազար / դրամ

Սիմոնյան Ռուդիկ 100000 / մեկ հարյուր հազար / դրամ

Հասանյան Հուսիկ 50000 / հիսուն հազար / դրամ

Վարդանյան Արման 100000 / մեկ հարյուր հազար / դրամ

Խաչատրյան Ռոբերտ 100000 / մեկ հարյուր հազար / դրամ